ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

մարտի 2023 թվականի №-Ա
քաղ. Երևան

ՄԻ ՇԱՐՔ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ.

ա) Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) 2023 թվականի հունվարի 31-ի №Ե/01/188-23 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ խնդրելով ընդունել անհատական որոշում, որի համաձայն՝ սույն որոշման №1 հավելվածում նշված Հայաստանի Հանրապետության մի շարք դպրոցների (այսուհետ՝ Դպրոցներ) գազասպառման համակարգերի՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության գազամատակարարման ցանցին միացման վճարը վերջիններիս փոխարեն կվճարի Հիմնադրամը կամ վերջինիս առաջարկությամբ՝ համապատասխան կառուցապատողը (այսուհետ՝ Կողմեր),

բ) Կողմերը համապատասխան գրություններով հայտնել են, որ չեն առարկում Դպրոցների գազասպառման համակարգերի՝ գազամատակարարման ցանցին միացման գործընթացը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների 10.15-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Դպրոցների գազասպառման համակարգերի՝ գազամատակարարման ցանցին միացման վճարը Դպրոցների փոխարեն վճարում է Հիմնադրամը կամ վերջինիս առաջարկությամբ համապատասխան կառուցապատողը՝ Կողմերի միջև կնքվելիք՝ նոր բաժանորդի կամ բաժանորդի վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման պայմանագրի հիման վրա՝ համաձայն №2 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կողմերին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
մարտի 2023թ.